

ապրող մարդ. հասարակ բանուորը, որի քրտինքով վաստակել է նա իւր միլիոնները եւ ապրում է իրօք անգործ եւ անխղով՝ ընթան ըսնալ նորա դէմ՝ եւ մեղադրել ծրիակերութեան համար չի համարձակուի. իսկ երբ տարին մի անգամ ժամ գալով մի կողմէ կէտում գանձանակը՝ համարձակ կեսուէ, իբրեւ իւր ծառաների վերայ կնայէ եւ հաշիւ կալահանջէ քահանայից ու վարդապետից, որոնք, եթէ ուրիշ բան իսկ չլինի, գոնէ առաւօտ երեկոյ ժամն գնում են. կարգեր կամ վանական պարտականութիւններ են կատարում, հոգեւոր կառավարութիւն կամ կոնսիստորիա են իջնում: Ինչիցն է այդ. անշուշտ նորանից, որ հոգեւորականն առհասարակ կամ կրօնաւորը իրօք հասարակութեան օգտին է ծառայում, որ նա ապրում ու գործում է ամէնքի աշքի առաջ եւ ամէնքին պատասխանատու լինելու զիտակցութեամբ: Բայց հասարակութիւնն եւս այդ իմանալով պէտք է գնահատել կարողանայ իւր տեսած ամենափոքր քարիքն անգամ, եւ եթէ չի տեսնում կամ քիչ է տեսնում՝ պէտք է աշխատէ աւելի լաւերին յառաջ բաշել եւ քաջալերել, իւր այն թերութիւնների վերայ ուշադրութիւն դարձնել, որոնք արգելք են լինում այդպիսիների յառաջ գալուն՝ ոչ թէ մէջտեղից վերցնել այն դասակարգը, որի կողմն է ընդհանրութեան մասին հոգալ եւ ընդհանուր քարիքն աւելացնել: Զրիակերներ շատ կան աշխարհիս մէջ՝ շատ են հասարակութեան անպէտք անդամներ. քայց նոցա ուրիշ տեղ որոնելու է:



ՄԱՅՐ ԱԹՈՒՐ.

Գրեթէ ամբողջ վերջին ամիսը Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում անցրեց, շատ կարճ միջոցներ միայն բացակայելով Բիւրական և Եղփարդ գնալու համար:

— Մայիսի 11-ին ս. Էջմիածին ուխտ եկաւ այրի Տիկին Եկատերինէ Մաղիբեան,

տ. Մ. Մեղիբեանի, պ. Զ. Գրիգորեանի և նորա Տիկնոջ ուղեկցութեամբ: Համբարձման տօնին Մայր Տաճարում մատուցած ս. պատարազը ընդունելով ի յիշատակ իւր հանգուցեալների՝ Տ. Մաղիբեան հոգաց նաեւ միաբանական ծաշի ծախքը: Ծաշի միջոցին, ուր բացի բոլոր միաբաններից հիւրեր ևս ներկայ էին, Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս յիշելով և գրուածելով Մեծարոյ Տիկնոջ և իւր հանգուցեալ ամուսնոյ բարեմասնութիւններն ու բարեգործութիւնները, իրիւ այնպիսի անձանց, որոնք միացրել կամ միացնում են իրենց մէջ հոգւոյ, մարմնոյ և ընչից երբակի բարիքը միանգամայն՝ յայանեց ի միջի այլոց, որ Տիկնը 1000 ր. նուիրել էր ի արամադրութիւն Նորին Վեհափառութեան, և ուրիշ նուէրների հետ խոստացել էր մի նշանաւոր կտակ անել բարեգործական նպատակներով. առաջարկեց ապա բարեպաշտ հիւրի և իւր ուղեկիցների կենացը:

— Գեր. Անանիա եպիսկոպոս, որ ժամանակաւորապէս Եռլի էր գնացել, ողջամբ Մայր Աթոռս ժամանեց:

— Եռլիս 3-ին մեկնեց Արժ. Թովմա վարդապետ Բաղդասարեան՝ Սողիան գնալու համար վանահօր պաշտօնով:

— Եռլիս 5-ին մեկնեց Գրիգորիս Ժ. վարդապետ Տէր Ստեփաննոսեան՝ կարգուած լինելով վանահայր Ագուլեաց ս. Թովմա առաքելոյ վանքի. իսկ յունիս 10-ին Պարսկաստան ուղևորուեցաւ Արժ. Թաշիկ վարդապետ Դատեան, որ նշանակուած է Սալմաստի վիճակի փոխանորդ:

Ս. Հռիփսիմեանց, ս. Գայիանեանց և ս. Եովհաննու ու Աթանաղինէի տօները կատարուեցան սովորական հանդիսով, այդ սուրբերի անուան նուիրուած վանքերում (վերջին տօնը ս. Եղաղակի վանքում): Ս. Հռիփսիմէի տօնին Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ հոգեհանգիստ կատարուեցաւ նորոգ հանգուցեալ վանահայր Տ. Երեմիա արքեպիսկոպոսի գերեզմանի վերայ:

— Ս. Լուսաւորչի տօն ի վիրապէն տօնի օրը ս. պատարագից յետոյ Նորին Սրբու-

Թեան ներկայութեամբ հոգեհանգիստ եղաւ Ռժ. Գ. Տիրգրանեանի համար, որ 40000 ռուբլի է կտակել ս. Էջմիածնին, տոկոսիբք զանազան բարի ձեռնարկութիւնների գործ զնելու պայմանաւ:

Սոյն երեկոյեան հանդիսաւ որ թափորով մայր տաճար իջաւ Սորին Վեհափառութիւնը, որ պատարագիչ էր յաջորդ օրը՝ Կաթողիկէ ս. Էջմիածնի տօնին: Զարմացք և հիացումն պատճառեց անշուշտ ս. պատարագին ներկայ եղող խումն բազմութեան ծերունի Հայրապետի անսպառ կորովը, որ այնչափ երկար ժամերի յոգնութիւն յանձն առաւ կրկին, որպէս զի Տիրոջ սեղանի առաջ բազկատարած աղօթէ, իւր բազմալիշտ հօտի համար: Ս. Պատարագից յետոյ Հայրապետական մաղթանք կատարուեցաւ:—Ծաշի միջոցին Ծեմարանի Ա. Լսարանի մի ուսանող գրաբար ուղերձ կարգաց տօնի առթիւ. ապա խօսեց Արժ. Գարեգին վարդապետ Յովսէփեան՝ ս. Էջմիածնի տօնը իբրեւ Հայաստանեայց ընդհանուր ս. Եկեղեցւոյ տօն ներկայացնելով, և աշխատելով բացատրել այդպէս նորա մեծ և ընդհանրական նշանակութիւնը: Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս մի քանի խօսքով ամփոփեց ճառախօսների ասածները և բաժակներ առաջարկեց ս. Էջմիածնի յարատեւութեան, Սորա Սրբազնագոյն Գահակալի արեւատութեան, Միաբանութեան զարգացման և բարի գործերով բարկաւաճման համար:—Այդ օր Երեւանից և ուրիշ տեղերից եկած բազմաթիւ հիւրերի թուում էր նաեւ Կիւլիի համալսարանի ուսուցչապետ պ. Ս. Եղիազարեան, որ երեքշաբթի մեկնեց՝ մի քանի օր Երեւանում մնալու մտադրութեամբ:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱՐՈՌՈՅ.

Վեհափառ Հայրապետի առանձին հրամանով ձեմարանում դասերը դադարեցան և ստորին դաստանց աշակերտներն արձակուրդ ստացան մայիսի 26-ին: Միւսները շարունակեցին իրենց քննութիւնները մինչև մայիսի 30:

Գրանոցական բաժինն աւարտեցին այս տարի

23 հոգի. իսկ մասն. բաժինը 5 հոգի, որոնք են. Զաքարեան Յովհաննէս Գիլիջանցի, Մահտեսի-Բաբայեան Եսայի սարկաւազ Գիշեցի, Միրաքեան Քերովբէ՝ Նոր Նախիջևանի Փոքր-Սալա գիւղից, Զուրաբեան Պօղոս սարկաւազ՝ Նոր Նախիջևանի Թոփտի գիւղից, Պետրոսեան Պոստանդին սարկաւազ՝ Նուխեցի:

Վերջիններս ցանկութեամբ կիւրակէ մայիսի 31-ին հոգեհանգիստ կատարուեցաւ ձեմարանի երջանկայիշատակ Հիմնադրի գերեզմանի վերայ. միաբանութեան և ժողովրդի բազմութեան հետ ներկայ էր նաեւ Վեհափառ Հայրապետ, Բ. Միրաքեան ճառ կարդաց, որ յառաջ ենք բերում ստորև:

Ուսումն. Խորհրդի ընտրութեամբ, որ Վեհափառ Հայրապետն Իւր սրբատառ կոնդակով բարեհաճեց հաստատել՝ այս տարուայ շրջանաւարտներից Պօղոս սարկաւազ * և անցեալ տարուայ աւարտածներից Սմբատ սարկաւազ ուղարկուեցան Մոսկուայի և Պետերբուրգի համալսարանները, լեզուագիտութիւն ուսանելու՝ այսպիսի նպատակով Բագուի Մարդ. ընկերութեան յանձնած Ագաթեան և Թումայեան կտակների հաշուին. Նոյն կտակների հաշուին նպաստ տրուեցաւ նաեւ Բարեշն. Մամբրէ վարդապետին, որ (չորս տարի առաջ աւարտած) կրօնօսոյցի և տնտեսի պաշտօն էր վարում ձեմարանում՝ Կիւլ գնալով և ի հարկին ուրիշ տեղերի համբաւաւոր վանքերն ևս այցելելով ուսաց վանական ցնեւորեալ ծանօթանալու, ուսաց լեզուի հմտութիւն և այլ գործնական հրահանգութիւններ ձեռք բերելու համար, Երկու սարկաւազները Հ. Մամբրէի հետ մեկնեցան Մայր Եկեղեցի յունիսի 1-ին. Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց վարդ. լանջախաչ պարգեւել Հ. Մամբրէին՝ ի նշան գնահատութեան նորա մինչև այժմ ցոյց տուած հաւատարիմ ծառայութեան:

* Աւարտաի այս համարի մէջ յառաջ ե քերած սարկաւազի անարտական շարադրութեան մի հատումը: Բոլոր նիւց անարտակերպ շարադրութեան նիւթ տրամեք այս տարի եկեղեցւոյ մեծ հայրերի՝ ս. Գրիգոր Աւստամարանի, ս. Յովնան Ոսկեքեանի, ս. Կիւրեղ Աղիւսակցացու, Մեծն Բարսեղ Աւստացու և Մեծն Արամատի գործոց ու վարդապետութեան ուսումնասիրութիւնը՝ զբխաւոր նպատակ ղեկելով Մայր Աթոռի մասնաւարտանի մեղացիներէից ստուգելի, իւր աշակի քան կայ նայեալն այդ հայրերից մնացած, ևս այցեղից տուակապեալ խղիւղ իրենց ուսումնասիրութեան նիւթը:

ԾԱՆՈԹՅՈՒՄՆ.

Ճեմարանում առաջիկայ ուսումնական տարուայ համար աշակերտաց ընդունելութիւնը կըսկսուի սեպտ. 1-ին. Այս տարի գիշերօթիկ աշակերտների ընդհ. թիւն էր 183, որոնցից 22-ի համար միայն թոշակ կամ դրամ նպաստ էր վճարուում. ձրիաթոշակ էին ուրեմն 161 աշ. Առաջիկայ տարին ևս ճեմարանը չի կարող ունենալ աւելի քան 160 ձրիաթոշակ. Այս կարգի նախկին սաներից սեպտեմբերին հազիւ միայն 25 հոգի պակասած կը լինին՝ նոյն չափով տեղեր բացուած նորերի համար. պէտք է ինկատի ունենալ ուրեմն, որ վարչութիւնը խիստ ընտրութիւն կանէ քննութեան ներկայացողների մէջ և կաշխատէ միայն ամենաընդունակներին և ամենալաւ պատրաստուածներին ընդունել. Աշակերտներ կընդունուին, սակաւ բացառութեամբ, Գ. և Գ. դասարանների համար. Բնութեան ծրագիրը և ընդունելութեան կանոնները մնում են նոյնը, ինչ որ նախընթաց տարիներում:

ՎԵՀԱՓԱՐՈՒ ՏԷՐ, ՍՐԲԱԶԱՆ ՀԱՐԲ և ՅԱՐԳԵ-
ԼԻ՝ ՀԱՆԳԻՍՈՒԿԱՆԵՐ.

Ամեն մի անհատ, որ ոտք է դրել այս սրբական վայրերը ուսման տենչով, սովորելու փափագով, և առաջին անգամ այս սուրբ տաճարի դռնից ներս է մտել ջերմոտանգն ոգւով և անկեղծ զգացմամբ աղօթելու Աստուծուն՝ կարող է վկայել, որ եթէ նորա արտասանած խօսքերը տարբեր էլ եղած լինին՝ այնուամենայնիւ նորա զգացածը, նորա սրտի աղօթքը նոյնն էր, ինչ որ Սաղմոսերգուն զգացել և աղօթել է միանգամ. «Ծառայ քո եմ ես, իմաստուն արա՛ զիս և ծանեայց զվկայութիւնս քո»:

Այս է ամեն ուսման ծարաւ ունեցող պատանու ուխտը. այսպէս ուխտել ենք և մենք մեր հայրերի Աստուծոյ առաջ. իմաստութիւն խնդրեցինք՝ նորանից, որպէսզի հասկանանք՝ նորա իրաւունքները. ուսում՝ ցանկացանք, որպէսզի ճրագ լինի այն՝ լուսաւորէ մեր միտքն ու կրթէ մեր զգացումները, և մենք ծանաչենք Աստուծոյ ծանապարհները, սովորենք հասկանալ և կատարել նորա պատուիրանները. Աստուած լսեց մեր այս աղօթքը, Այդ օրուանից անցաւ եօթը տարի, և մենք աւարտեցինք մեր ուսման ընթացքը. ապրեցինք լուսոյ վայրում, որպէս Աստուծոյ խնամքին անձնատուր երկնքի թռչուններ՝ անհոգ, ուրախ երջանիկ, անտեղեակ աշխարհային ցաւերին ու վշտերին՝ սնուած ուսման կաթով. Այժմ եկել է ժամանակը երբ մենք պէտք է հաշիւ տանք և ասենք, թէ ինչ ենք ուսել, ար-

դեօք որպիսի աստուածային օրէնքներ ծանաչել: Բայց, կըհարցնէք, ի՞նչու ենք այս գերեզմանի առաջ կանգնած այդ մասին խօսք անում: Ի՞նչ զգացումն է մեզ այստեղ բերել. . . Անշուշտ, երախտագիտութեան զգացումը՝ Աստուծոյ այդ մեծ օրէնքը և առաջին պահանջը մեզնից, որի գոյութիւնը մեր սրտում կամ բացակայութիւնը արդէն ապացոյց է նորա իրաւունքները ըմբռնելուն կամ չըմբռնելուն: Իսկ մենք կարող էինք այդ զգացումը չունենալ, կարող էինք մեզ երախտապարտ չզգալ դէպի այն մարդու յիշատակը, որի հոգին ահա եօթը տարի շարունակ հովանաւորել և ուղեցոյց է եղել մեզ՝ մեր դէպի Աստուած և դէպի հայ ազգն ունեցած պարտականութիւնները ծանաչելու, և թերեւս այժմ իսկ թեւատարած սաւառնում է մեր վերայ, եթէ բնական է հարազատ զաւակի երախտագիտական զգացումը դէպի իւր ծնողքը, որոնցից նա կեանք է ստացել, սէր է վայելել շարունակ և գգուանք, թէ սուտ չէ որդիական սիրոյ գոյութիւնը՝ այն ժամանակ բնական է և մեր այս սիրոյ ու երախտապարտութեան զգացումը դէպի մեր Մայր Ճեմարանը, դէպի նորա անմահ Հիմնադրի յիշատակը:

Այժմ, երախտապարտ ենք մենք և զգում ենք նուիրական քաղցր պարտականութեանց մի ծանրութիւն մեր վերայ, Բաւական է հարեանցի կերպով միայն յիշել, թէ որպիսի խնամք վայելեցինք մենք Ճեմարանում, որպիսի առանձնաշնորհութիւնների արժանացանք մեր ս. Եկեղեցւոյ կողմից, և հասկանալի կ'լինի մեզ, թէ որքան մեծ է մեր վերայ դրուած պարտքը. պարտք դէպի երջանկայիշատակ Գեորգ կաթողիկոսի անունը կրող մեր մայր Ճեմարանը, պարտք դէպի հայ ժողովուրդը, պարտք դէպի ազգային ս. եկեղեցին, դէպի Մայր Աթոռը՝ դէպի բարեխնամ Հովուապետ Ազգիս:

Ըստ երեւութիւն տարբեր պարտքեր են սոքա, տարբեր առիթներով. բայց իսկապէս մի պարտք է՝ մի ընդհանուր բարոյական մեծ պարտք, որի ճշգիւ հատուցումից է կախուած մեր պարզերես ներկայանալը մի օր Ամենակալի աթոռի առաջ, Թէ ի՞նչպէս կ'հատուցանենք այդ սրբադան պարտքը՝ ապագայում կերեւայ մեր գործերից: Մեր խնդիրը Աստուծուց այժմ միայն այն պիտի լինի, որ ուր էլ լինինք, ի՞նչ էլ անենք՝ պարտքի այս զգացումը միշտ մեզ հետ լինի և մեր կեանքի խթանը դառնայ, և մենք այդպիսով հաւատարիմ եղած լինինք Աստուծոյ հետ կապած մեր ուխտին, թէ «ծանեայց զվկայութիւնս քո»:

Մեզ մնում է, սիրելի ընկերներ, միաբերան աղօթել. Աստուած լուսաւորէ՛ երջանկայիշատակ Գեորգ կաթողիկոսի հոգին, նորա հոգին ուղեկից լինի մեզ և հովանի կեանքի փշոտ ասպարիզի վերայ՝ նորա անունը ոգևորութեան և քաջաբերու-

Թեան ազրիւր մեզ համար մեր առաջ ելնելիք խոչընդոտներն ու փորձութիւններն մէջ. Ազօթեւ լի երախտագիտական ջերմ զգացումներով, որ երկար տարիներ անպակաս մնայ ամէնքիս վերայից Գէորգ Գ.-ի Աստուածընտիր յաջորդի մեր գործագութեան Լօր և Սրբաշնագոյն Հայրապետի կենդանի հովանին: Ազօթեւ մեզ խնամող Մայր Աթոռի մեզ սնուցանող մայր ճեմարանի յարատեւ հաստատութեան և բարգաւաճման համար: Մաղթենք ջերմեռանգ սրբութիւն, որ աստուածահաճոյ կեանքի սերմերը ապարդիւն չանցնին մեր մէջ, այլ պտղաբերեն սերունդէ սերունդ:

Թէև, ընկերներ, մեր ճանապարհները բաժանուում են այժմ, բայց մենք, յուսով եմ, միշտ միասին կ'մնանք հոգւով, որովհետև մի անուն կապում է բոլորիս գաղափարական կապով՝ Գէորգ Գ.-ի անունը: Եկէք, համբուրենք մի անգամ և՛ նորա նուիրական շիրիմը և վերահաստատենք ու կնքենք մեր հաւատարմութեան ուխտը: Թող գեռ շատ ու շատ սերունդներ, ոգևորուած Գէորգ կաթօղիկոսի յիշատակով, գան այս ցուրտ գերեզմանին անկեղծ երախտագիտութեան և շնորհակալութեան զգացումների ջերմ համբոյրներ դրոշմելու:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք:

Մանչէսթըրի բարեսէր ազգայինք որոշեցին իրենց ծախքով 30 որբ պահել. Ս. Պատրիարք Հայրը կարգադրեց է որ այս նպատակով նոր որբանոց մը բացուի Այնթապի մէջ, քաղաքային ու շրջակայ գաւառակներուն համար:

— Գրեզնոյէ (Գալիֆօրնիա) քաղաքի ազգայինք, ընդ որս մաս մը Հայ-բողոքականք, որոշեցին տարուէ տարի գոնէ 360 տղար զրկել Ս. Պատրիարք Լօր, որբանոց գործին համար, և իբրեւ առաջին եռամսեայ, 110 տղար զրկել են:

— Գոնեայի (Եփեսոս) նորակազմ առաջնորդական վիճակն, որուն Առաջն. Տեղապահ կարգուեցաւ Տ. Արիստակէս Ծ. Վ. Վանքեան, բոս վերջին մարդահամարի կարգունակէ 12,160 Հայ, հետեւեալ կերպով.— Սանձագ Գոնեայի, Գոնեա 1,500 Հայ, Ագ-չէհիր 4,000, Գարաման 1,000, Էրէլի 800, Սէ-յաիչէհիր 100, Պէքչէհիր 50, Գումար 7,450 Հայ, Պուսակալութեան կեդրոնական դաւառին մէջ.— Սանձագ Անրալիայի, Անթալիա 50, Էլմալլը 250, Գումար 300.— Սանձագ Պուշուրի, Պուլտուր 600, Թէֆէնի 10, Գումար 610.— Սանձագ Սպարսայի, Սպարթա 500.— Սանձագ Նիյսի, Նիյոս 1,000, Պոր 600, Ագսէրայ 600,

Մատեն Համիտիէ 600. Նէվշէհիր 500, Գումար 3300, Լ. հ. Գոնեայի կուսակալութեան այս հինգ Սանձագներէն կազմուած է Գոնեայի Առաջնորդութիւնը, Սոյն նոր Վիճակը կազմելու համար Ագչէհիր բաժնուած է Եղմիրի վիճակէն, և Նիյոսէի Սանձագն ամբողջութեամբ բաժնուած է Կեսարիոյ վիճակէ: Թէև վիճակայնոց թիւը սակաւ է, բայց ամէնքն ալ քաղաքի բնակիչ ըլլալով, համեմատաբար աւելի բարեկեցիկ են, և կ'ուսացուի որ իրենց հոգևոր և իմացական պէտքերուն մատակարարութեան համար Առաջնորդ մը վայելչօրէն պիտի կրնան պահել: Առայժմ ամէն ինչ կազմակերպութեան կկարօտի նոր վիճակին մէջ, որ ոչ առաջնորդարան ունի, ոչ ալ ազգային—վարչական մարմիններ:

— Ս. Պատրիարք Հայրն որոշեց է Բարերդի Ազգ. վարժարանը նկատել Որբանոց, և այս անունով ամսական հինգ ոսկի յատկացուցեց է այն վարժարանին, և գումար մ'ալ զրկեց է դպրոցին կազմակերպութեան նախնական ծախքերուն համար: Բարերդի մէջ բաւական շատուր են խեղճ տղաք: Ասոնցմէ 20 հատ կուգէր որդեգրել Տքդ. Չէմպլըզ Պարնոյ, բայց չէր ընդունեց Պատրիարքարանի դրած պայմանը Թէ Միսիոնարական Որբանոցին մէջ տղաք Հայ. Եկեղեցւոյ վարդապետութիւնն ուսնին հայ կրօնուսոյցէ, և կամ շաքարթն անգամ մը կէս օր ազգ. վարժարան կամ ազգ. Եկեղեցի զրկուելով յատկապէս այս ուսման համար, Տքդ. Չէմպլըզ կրնդունէր որ հայ որբեր կիրակի և տօն օրեր զրկուին Հայոց եկեղեցին, բայց իբրեւ հաստատ սկըբունք կը հռչակէր Թէ Հայ որբեր պէտք չէ գիտնան Հայ Եկեղեցւոյ և Բողոքականութեան տարբերութիւններն, և իրենց միտքը կրօնային խնդիրներով չզբաղեցնեն: Ս. Պատրիարքն ալ կը պնդէ Թէ Հայ որբերն ինչ տեսակ Որբանոցի մէջ ալ պատասպարուած ըլլան, պէտք է գիտնան Թէ իրենք Հայ են և Հայ. Եկեղեցւոյ դաւակ, և պըզտիկուց սովորին սիրել և պաշտել իրենց ազգ. Եկեղեցին: Ս. Պատրիարք Հայրը կ'պնդէ նաև Թէ օտար Քրիստոնէից որբանոցմ հանգանակութիւնք մարդասիրական գործ մը միայն կրնան ըլլալ, և ոչ Թէ կրօնային մասնաւոր դաւանութիւն մը յառաջ քշելու հնարք մը: Նուիրատու բարեսէր Քրիստոնեաներն ալ հարկաւ չեն ուզեր որ այս տղոց որբ մնալուն հանգամանքներէն օգուտ քաղուի՝ զանոնք կրկին անգամ որբացնելու՝ զրկելով իրենց ազգ. Եկեղեցիէն, հակառակ ջերմ բաղձանաց իրենց մայրերուն կամ այլ ընտանեկան պարագաներուն և հակառակ ազգին ջերմ փափաքին, որ եթէ իր ձեռքէն գար, իր բոլոր որբերն ինք կ'հօգնանաւորէր, կ'նստմէր, կ'գաստիարակէր, բայց չուզեր որ օտարներ իր այս մասին նիւթական անբաւականութենէն օգուտ քաղեն՝ իր տղաքն իբրեւ բողոքական կամ կաթօղիկ մեծցնելու համար:— Պարնոյ առաջն. Տե-

դապահ Տ. Զաւէն Ծ. Վ. երկար բանակցու-
ցութեամբ մը Տքդ. Զեմպրըղի հետ, շատացեր է
մինչև անգամ առաջարկելով որ Հայ որբերուն մի-
այն Հայ. Եկեղեցւոյ պատմութիւնը դաս տրուի
Տքդ. Զեմպրըղ զայն ևս մերժեր է, անյողողող
մնալով այն սկզբունքին վրայ թէ Հայ որբերը պէտք
չէր որ մասնաւոր Եկեղեցի մը ճանչնան, ոչ իսկ
Հայ. Եկեղեցին, ուրիշ բան է որ մեծանելէն ետքն
ուր որ ուզեն հոն երթան, Յայտարարելով թէ
իրեն տրուած հրահանգն այն է, Տքդ. Զեմպրըղ
ետ կեցեր է Բարերգէ 20 որբ Կարին իր Որբանոցը
բերելէ, և այն որբերուն համար իրեն յանձնուած
դրամն ետ զրկեր է Պոլիս, Զուլիցերիա կամ
Ամերիկա վերագարծուելու համար, (Լաւագոյն գա-
տի մը արժանի յամառութիւն) Բայց կսենք թէ
Պայպլ Հաուզ չի յօժարիր այս խղճան, և կյու-
սայ համաձայնութիւն մը գոյացնել:

— Աւրիշ լուր՝ Եդեսիայէ, Այստեղի գերման
և ամերիկեան Միսիոնարութեանց ներկայացուցիչ-
ներ, բանակցելով առաջն. Տեղապահ Տ. Անանիա
Վ. -ին հետ, համաձայններ են որ իրենց Որբանոցին
մէջ Հայ տղաք Հայ. Եկեղեցւոյ դաւանանքն ու
վարդապետութիւնքն ունին, և Առաջնորդարանի
կողմէ այս ուսուցչական պաշտօն յանձնուեր է ազգ-
վարժարանի ուսուցիչ Գ. Կ. Սեկերիչեան էֆ. -ի:
Ճիշտ այն բանը զոր Տքդ. Զեմպրըղ յանուն Բո-
ղոքականութեան և Միսիոնարութեան անյեղլի ան-
դառնալի սկզբունքներուն կմերժէ բացարձակ, Եդե-
սիոյ նոյնքան հաւատացեալ Բողոքական Միսիոնարք
և Միսիոնարուհիք առանց դժուարութեան կընդու-
նին, Պայպլ Հաուզի Միսիոնարական ժողովին հրա-
հանգներուն համեմատ, Միայն թէ Եդեսիոյ այս
օտար որբախնամներն ալ ուրիշ բան մը կըսեն. —
13 տարեկանէն առաջ չեն ընդունիր որ Հայ որբե-
րը ս. հաղորդութիւն առնուն հայ Եկեղեցւոյ մէջ,
Յանձն կառնուն ամէն կիրակի Հայոց եկեղեցին
զրկել, բայց հաղորդութիւն տալու համար, սպա-
սեցէք որ 13 տարեկան ըլլան, կըսեն, մինչ Կարնոյ
Տքդ. Զեմպրըղ այսպիսի պայման չի դնէր:

Վիսակացոյց Կ. Պոլսոյ քաղաքին վարժարանաց. —
Ուսումնական Խորհրդոյ Դիւանը պատրաստած է
այս Վիճակացոյցն 1898 տարուայ համար, աւելի
մանրամասն քան անցեալ տարուանը, ցուցնելով
նաև թաղային վարժարաններուն ուսումնական աս-
տիճան, իրեն նախնական, միջին և բարձրագոյն
նախակրթարան, Այս նոր Վիճակացոյցը բաղդա-
տելով անցեալ տարուանի հետ, կգտնենք հետևեալ
տարբերութիւնները. —

	1897	1898
	Յունուար 1	Յունուար 1
Աշակերտք	2,177	2,213
Աշակերտուհիք	1,013	1,166
Մակարաւ-ի տղաք	635	1,104
	3,825	4,483

Ուսուցիչք	141	175
Վարժուհիք	39	38
Մակարաւ-ի վարժուհիք	19	36

Ամսական ծախս	Ամսական ծախս
1897-ի	1898-ի
Բոլոր թաղային վարժարնք. 58,383	63,953

Թաղային վարժարաններէ գուրս, Մայրաքա-
ղաքիս Պետական վարժարաններն և այլ հայ վար-
ժարաններն, ինչպէս և օտար վարժարանները կյա-
ճախեն 1,108 հայ ուսանողք, հետևեալ կերպով. —

Աշակերտք և աշակերտուհիք.	
Պետական վարժարանները կյաճախեն	318
Այլ և այլ հայ վարժարանք	570
Օտար վարժարանք	220
	1,108

Կ. Պոլսոյ ազգային թաղային բաց վարժարանք
38 հատ են, որոց աստիճանն ու դասարանական
բաժանումները ցուցուած են նոր պատրաստուած
Վիճակացոյցին մէջ, Կան նաև ութ փակ վարժա-
րանք, որոց փակ մնալուն պատճառն է գլխաւորա-
պէս դրամական տագնապն, և հայ թաղեցիներու
տեղափոխումը կամ գաղթումը, Այս փակ վար-
ժարանք են՝ Ելուպ Ս. Աստուածածին, Էլէմտաղի
Ս. Նշան, Սթենիա Ս. Կարապետ, Գանտլիլի Ս.
Առաքելոց, Ազատը Տատեան վարժարան, Էթմէյ-
տան թաղային տարրական, Սալմաթօմրուզ Ս. Թա-
ղէոս և Բարթուղիմէոս, Նարլը Գափու Վառ-
վառեան աղջկանց նախակրթարան:

38 թաղային վարժարաններէն զատ, որոշեալ
ազգային հանրային եկամուտներով կամտակարա-
րուին (1) Վալաթիոյ Կեդրոնական Վարժարանն,
ուր կյաճախեն 39 աշակերտք, և պաշտօն կվարեն
10 ուսուցիչներ. (2) Արուստանոց Բերայի, 25
աշակերտուհիով և վեց ուսուցիչով կամ վարժու-
հիով. (3) Գալֆեան Որբանոց, 35 աշակերտուհի
3 մայրապետով և 2 ուսուցիչով:

Գումարելով թաղային վարժարաններ յաճա-
խող երկու սեռէ հայ աշակերտաց թիւն և ոչ-թա-
ղային հայ վարժարաններն և պետական ու օտար
վարժարաններ յաճախողներուն թիւերը, կգտնենք
թէ Կ. Պոլսոյ մէջ ընդ ամենայն իրը 5,600 հայ
տղաք դպրոց կյաճախեն: Աւելորդ է երկարացնել
թէ գոհացուցիչ թիւ մը չէ այս, 1 Հայ—հոմեա-
կան և հայ—բողոքական տղաք այս հաշուոյ մէջ
չեն:

(Օտար վարժարաններ յաճախող 220 տղոց
թիւը պակաս կթուի մեզ, Միայն Ռոպէրդ Բոլէճ
100 հայ տղաք միշտ կգտնուին. Միաթարեանք քով
100 ևս, Հապա Սկիւտարի Ամերիկեան Աղջկանց
Բոլէճն, (80—100), Բերայի գերմանական—գուր-
ցերեան վարժարանն (50), Անզլ. Աղջկանց վարժա-
րանն (30), Միս Կլիսընի Մանկապարտէզն ի Խառ-

գեղ (50)՝ Մ. Քոսի ֆրանսիական Բոլեճը, Եթէ մոռացումները ճշտուին, թերեւ 6,000-ի յանգի զպրոց յաճախող հայ-լուսաւորչական տղոց թիւը)։

Այս շահեկան Վիճակացոյցը պատրաստած է Ալեքսան Էֆ. Արփիարեան, Ուսումնական Խորհրդոյ քարտուղարը, Ս. Պատրիարք Զօր հրահանգներուն համեմատ, Մեծ տախտակի մը ձեռք պիտի հրատարակուի ի մօտոյ։

Վերադարձող Հայ գաղթականք. — Գատական և Կրօնական պաշտօնարարնէն Ապր. 27 թուով Պատրիարքարան ուղղուած Թէգլքերէ մը ի պատասխանի Պատրիարքարանի թագրիրին, կձանուցանէ թէ՛ ըստ Կայս. Իրատէի՝ սա երեք որոշումները տրուած են ի մասին հայ գաղթականներու և ճամբորդներու որք երթեկեկել կկամին. (Ա.) Արտասահմանէն Ա. Պոլիս վերադարձող իւրաքանչիւր Հայու համար, երբ Պատրիարքարանի կողմէ ապահովութիւն տրուի, և իր բնակելիք թաղին Մուխթարն և թաղին երեւելիներէն երկու հոգի երաշխաւոր ըլլան, պիտի արձակուի. (Բ.) Ընտանիքով դարձող գաղթականներուն նկատմամբ, երբ նոյն ընտանիքին պետին համար Պատրիարքարանի կողմէ ապահովութիւն տրուի, և իր բնակելիք թաղին Մուխթարն և թաղին երեւելիներէն երկու հոգի երաշխաւոր ըլլան, իր ընտանիքին անդամներն ալ իրեն հետ մէկտեղ պիտի արձակուին առանց ուրիշ գործողութեան. (Գ.) Գալով վերադարձող այն գաւառացի գաղթականներուն, որք իրենց գաւառին մէջ առևտրական գործ կամ կալուած ունին, անոնք Պոլիս պիտի չապահովին, այլ ապահովութեան ու երաշխաւորութեան ինչ գործողութիւն որ հոս պիտի կատարուէր Պատրիարքարանի միջոցաւ, Առաջնորդարանի միջոցաւ պիտի կատարուի իրենց գաւառին մէջ, ուր պիտի զրկուին անմիջապէս։

— Կարևոյ առաջնորդական Տեղապահ Տ. Զաւէն Ծ. Վ. անցեալ ամսուն մէջ կատարեր է Կարինէ 1½ ժամ հեռի Ս. Լուսաւորչի Վանքին վերաշինութեան հիմնարկէքը։

— Ս. Պատրիարք Հայրը Վանայ նահանգին Որբանոցներուն թիւը չորսի բարձրացուց այս օրերս, Կարգադրեց որ յատկապէս աղջկանց համար Որբանոց մը բացուի Սալնապատայ Ս. Գրիգորի վանքին մէջ (Կարմրաւորայ վանքին մօտ)։ Երբուն ամսական հինգ ոսկի յատկացուց, և Նարեկայ վանքին մէջ ալ մանչերու համար Որբանոց մը բանալ կուտայ, Աղթամարայ կաթողիկոսութեան իրաւասութեան ներքէ, ամսական 10 ոսկի նպաստ յատկացնելով։



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ԻՆՉ Է ԿՐԹՈՒԹԻՒՆԸ.*

Ով որ միշտ բանք անելով է ձգտում,
նա է առժամի բողոքական։

Գեօթէ.

Սեռների վերայ միայնացած ապրում էր մի իմաստուն իւր որդու հետ, որի հոգին և սիրտը առատ ձիրքերով օծուած էր։ Հայրը իւր զաւակին դաստիարակել էր ամենայն խնամքով։ Նա զարգացրել էր նորա բոլոր կարողութիւնները, հրահանգել էր նորան ամենայն առաքինութիւններով, ուսուցել էր սէր առ Աստուած և առ մարդիկ և բաց էր արել նորա աչքը բնութեան հրաշալիքների և գեղեցկութիւնների համար, Եւ երբ որ տղան պատանի դարձաւ, հայրը արձակեց նորան, որ գնա աշխարհք մտնէ, մարդ տեսնէ, «Զինքն թէ գանձեր դիզելու կամ փառքի ու պատուի ձգտես ազահարար», խրատեց նորան. «Գնա և Կրթութիւն փնտռիր. ահա այս է իմ կամքը, իսկ երբ որ գտնես, դարձեալ ել մեր լեռները, Ով գիտէ, այն ժամանակ դուցէ ինձ պէս ունայն համարես նիւթական աշխարհքի կարօտը»։

Պատանին գորովալից և հնազանդ սրտով խոստացաւ վարուել հօր պատուէրի համեմատ և չհանգըստանալ, մինչև որ խոստումը ճշգումթեամբ չկատարէ։ Անհոգ եղիր ես շուտ կը վերադառնամ, բացականչեց նա վստահութեամբ, և սկսեց սարերից իջնել գէպի մարդիկ.

Եւ ահա իրան հանգիպեցաւ մի վեհապանձ, փառահեղ կին, որ ընդ առաջ էր գալիս մեծարոյ և արգոյ կերպարանքների երկար թափօրով, նուցանից ոմանց նա ճանաչեց. Սոկրատէսին, Պլատոնին և Արիստոտէլին իսկոյն նշմարեց այն շարքի մէջ, որ թուում էր թէ անվերջ պիտի լինի.

«Արդեօք երա՞ղ է այս», գոչեց նա խնդրութեամբ. «Ահա նա ինքը», Եւ անկասկած սրտով

* „Umschau“ շարադրաբերք մեցանոյ և եղանակի «Կրթութեան» մասին խմբագրական գրիւտ համար. երեսոյ մեցանակը վիճակուել է օր. Կասարիկէ Ֆիսիքմանիէ, որի յօդուածը բարգմանելով՝ ներկայացնում ենք մեր ընթերցողներին։

